ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ✦ НАШИ ЮБИЛЯРЫ

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ
(Մենդյան 60-ամյակի առթիվ)

Բեղմնավոր է եղել ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Խաչենի Սարգսյանի գիտական գործունեությունը: Անցած երեքուկես տասնամյակի ընթացքում նա շուրջ հարյուր անուն գիտական աշխատություն է հրատարակել. և ընթերցողն այսօր հնարավորություն ունի ճստակ պատկերացնելու նրա թե՛ աշխատանքային-հետազոտական մեթոդը և թե՛ հարցերի ու հետաքրքրությունների շրջանակը:

Ուշ բաբելական շրջանի հինարևելյան քաղաքի, նրա սոցիալական կազմի, հողատիրության, վարչական կառուցվածքի, համայնքի կազմի ու իրավասությունների և հարակից այլ խնդիրների ուսումնասիրությանն է նվիրված Գ. Սարգսյանի աշխատությունների մի նշանակալի մասը: Դանելով հետազոտության ու հրապարակման ժամանակագրությունից (առաջինը՝ 1952 թ., վերջինը՝ 1985 թ.), հարցի նկատմամբ գիտնականի ունեցած հետաքրքրությունը տևական է և պայմանավորված երկու հանգամանքով՝ աղբյուրագիտական բազայի ընդարձակումը նորանոր արծարծումների հնարավորություն է ընձեռում և ապա՝ բացահայտվում են իրողություններ, որոնք առանձնակի կարևորություն ունեն հելլենիստական դարաշրջանի արևելյան քաղաքակրթությունների հետազոտման համար: Այսպես, օրինակ, Գ. Սարգսյանը բացահայտեց ու գիտականորեն բնութագրեց հինարևելյան քաղաքային համայնքի մի նոր տիպ, որ նա կոչեց (և այժմ էլ արևելագիտական գրականության մեջ կոչվում է) տաճարաքաղաքացիական համայնք: Վերջինս ձևավորվել է տաճարական անձնակազմի և լիիրավ քաղաքացիների ի մի ձուլումով՝ առաջ բերելով տնտեսական ու իրավական նկատելի փոփոխություններ: Հիշված աշխատությունները գերազանցապես հիմնված են սեպագիր և պատմագրական աղբյուրների համադիր ուսումնասիրության վրա: Գ. Խ. Սարգսյանը իր մասնագիտական պատրաստության թելադրանքով և պատմաբանասիրական աշխատանք կատարելու հմտության բերումով երբեմն տասնամյակ շարունակաբար զբաղված է սեպագիր վավերագրերի վերծանմամբ ու հետազոտությամբ: Դեռևս 1955 թ. նա հրատարակեց Էրմիտաժում պահվող սելևկյան շրջանի մասնավոր գործարքների վերաբերյալ սեպագիր վավերագրերը, իսկ 1975-ին՝ Բեռլինի Առաջավորասիական թանգարանի նմանօրինակ բնագրերը: Հետագայում նա ձեռնամուխ եղավ Բեռլինի, Փարիզի և այլ քաղաքների հնաղարաններում գտնվող սեպագիր աղբյուրների վերծանությանը, թարգմանությանն ու քննությանը, ԳԴՀ-ի մասնագետների հետևակցությամբ տպագրության պատրաստելով երկնատոր հիմնարար մի աշխատություն «Հելլենիստական դարաշրջանի Միջագետքի սոցիալ-տնտեսական պատմության սեպագիր վավերագրերի դիվան»: Զուգահեռաբար Գ. Սարգսյանը հայրենական ու արտասահմանյան մասնագետ ընթերցողներին ներկայացրեց Միջագետքի սեպագիր քաղաքակրթության և հելլենիզմի շփումներին ու առնչակցություններին վերաբերող հոդ-

վածաշար: Դ. Սարգսյանի այս և մյուս բոլոր աշխատությունների հիմնական առանձնահատկություններից մեկը սկզբնաղբյուրների բանասիրական մշակման և աղբյուրագիտական քննության հմուտ համատեղումն է, որ նախորդում է պատմաբանի վերլուծությանը:

Առաջավոր Ասիայի հելլենիստական դարաշրջանի քաղաքների ու քաղաքային համայնքների ուսումնասիրությունը Դ. Սարգսյանին հանգեցրեց Տիգրանակերտի հետազոտությանը, որի հիմնադրության և շուրջ հինգհարյուրամյա գոյության պատմությունը բնութագրական է հայ ժողովրդի անցյալի կարևոր մի փուլ հետազոտելու և պարբերացնելու համար: Գիտնականը այն իրականացրեց «Тигранакерт. Из истории древнеармянских городских общин (М., 1960) աշխատությամբ: Անտիկ շրջանի պատմագրական աղբյուրների տեղեկությունները, Հայաստանում պահպանված մի քանի հունարեն արձանագրություններն ու հայ պատմիչների հաղորդումները հնարավորություն էին ընձեռում արծարծելու չորս հիմնական հարց՝ նոր քաղաքների հիմնադրության շարժառիթները, այլազգիներ վերաբնակեցնելու նպատակը, քաղաքային համայնքի կազմն ու կառուցվածքը, սոցիալ-տնտեսական բնույթն ու ստրկատիրական կացութաձևի խնդիրը Հայաստանում:

Ի հակադրություն ավանդական պնդումների, Դ. Սարգսյանը Տիգրանակերտի օրինակով ցույց տվեց, որ հելլենիստական քաղաք հասկացողությունը ամենևին նույնական չէ հելլենականին, և այս պարագան իր կնիքն է դնում քաղաքային համայնքի թե՛ էթնիկական նկարագրի, թե՛ նրա տնտեսական գործունեության վրա: Հեղինակը հետամուտ է առավելապես տարբերությունները բացահայտելուն, որը և հնարավորություն է տալիս նկատելու և ուսումնասիրելու հայկական հասարակության առանձնահատկությունները:

Տիգրանակերտին նվիրված մենագրությունը միաժամանակ նախապատրաստություն էր անցում կատարելու կարևոր մի հարցի՝ հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի քննությանը: Դ. Սարգսյանը այստեղ նս ուներ արժանավոր նախորդներ, բայց այժմ անհրաժեշտ էր առանձին տերմինների քննությունից անցնել հասարակության ամբողջական բնութագրությանը, որով միաժամանակ կբացահայտվեին ավատատիրության սկզբնավորման առանձնահատկությունները Հայաստանում. 1962 թ. Երևանում լույս տեսած «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» գիրքը, մասնավորապես, հարցադրումն ամփոփող և ընդհանրացնող առաջին մենագրական ուսումնասիրությունն է մեզանում:

1960-ական թթ. սկսած Դ. Սարգսյանի աշխատությունների խորագրերում հանախակի երևում է Մովսես Խորենացու անունը: Սկզբնապես այդ պայմանավորված էր հին Հայաստանի քաղաքական ու մշակութային պատմության առանձին հարցերի վերաբերյալ Խորենացու հաղորդումների ընհատությամբ ու վերլուծությամբ (աղբյուրներից օգտվելու համակարգը, ժամանակագրական վկայությունները, նախնյաց պաշտամունքի արձագանքներ և այլն): Հարցադրումների աստիճանական ընդլայնումն ու խորացումը հեղինակին հնարավորություն է ընձեռում ստեղծելու «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը» (1965 թ.) և «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» (1966 թ.) մենագրությունները: Ավանդական հայագիտությունը Խորենացու տեղեկությունների արժանահավատությունը ստուգում էր գերազանցապես արտաքին աղբյուրներով, բավականաչափ ուշադիր չլինելով պատմագրելու հեղինակային սկզբունքին և համաժամանակյա ցանկերի ստեղծման ելակետային իրողություններին: Դ. Սարգսյանը առաջին աշխատության մեջ որդեգրում է Խորենացու «Պատմությունն» իբրև ինքնին համակարգ դիտելու սկզբունքը, ամենևին չբացառելով արտաքին տվյալների կարևորությունը և հասնում պատմագիտական-աղբյուրագիտական հանգիչ արդյունքների: Երկրորդ գիրքն արդեն այլ բնույթի է. այստեղ թե՛ Խորենացու երկն է հելլենիստական Հայաստանի պատմության աղբյուր ծառայում և թե՛ հելլենիզմի դարաշրջանի ստուգապես հետազոտված պատմությունը Խորենացու պատմագրական մեթոդը հանաչելու և գնահատելու հնարավորություն է տալիս: Դ. Սարգսյանի հիշյալ երկու մենագրությամբ խորենացիագիտությունը այլևս դադարում է իրարամերժ կովանների ու հարցադրումների բանասիրական մարզ լինելուց և հասնում այնպիսի սահմանագծի, որ բանասիրությունն ու պատմությունը լծվում են մեկ խնդրի՝ հիշտ հասկանալ Պատմահորը և նույնքան հիշտ գնահատել նրա երկի տեղեկությունները՝ խստիվ տարբերակելով իրականն ու առասպելականը: Թե որքան արդյունավոր է նման մոտեցումը՝ կարելի է հավատահանալ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության առաջին հատորի (1971 թ.) «Հայաստանը հելլենիստական ժամանակաշրջանում» բաժինը կարդալով, որի հիմնական մասի հեղինակը Դ. Սարգսյանն է:

Գ. Սարգսյանի աշխատություններում կան հայ պատմագրության սկզբնավորմանը, զարգացման խնդիրներին ու մշակութային հարցերին վերաբերող բազմաթիվ դիտարկումներ, որոնք նորովի են լուսաբանում տեսականորեն արժարժված առանձին առեղծվածներ: Հայագետներ (Մ. Աբեղյան, Հ. Մանանդյան, Գ. Խալաթյանց) արդեն պարզել են, որ Երվանդյանների ու Արտաշիսյանների պատմությունը կերտելիս Խորենացին հիմնականում դիմել է ավանդություններին: Գ. Սարգսյանը ցույց է տալիս, որ Պատմահոր մոտ այնուամենայնիվ կան պատմական հիմք ունեցող այնպիսի դրվագներ, որոնք չեն հանգում գիտությանը հայտնի հունական աղբյուրներին ու հայկական տոհմական ավանդություններին: Դրանք, ըստ գիտնականի եզրահանգման, հաղվագեպ են մեզանում գոյություն ունեցող մենենական պատմություններից, որպիսին և եղել է Ողյումպոս Քուրմի մեզ չհասած, բայց Խորենացու համար աղբյուր ծառայած երկը: Ուստի, հետազոտողի գնահատությամբ, մենենական այդ պատմությունը «դառնում է նախամիքստոնական շրջանի հայ պատմագրության փաստ, և որպես այդպիսին իր պատշաճ տեղը պիտի գրավի հայ գրականության պատմության մեջ»:

Հայագիտության մեջ դեռևս այսօր էլ բնաբերվում է նախամաշտոցյան գրի և գրականության հարցը: Հիրավի, դժվար է ենթադրել, թե քրիստոնեության քարոզչությունը շուրջ մեկ հարյուրամյակ կարող էր օտարալեզու լինել: Դ. Սարգսյանի կողմից վերջին տարիներս լույս ընծայվեց տեսական հիմք և գործնական նշանակություն ունեցող մի հիմնադրույթ, ըստ որի Սուրբ Գրոց թարգմանությանը նախորդել է այսպես կոչված «հետերոէպիկ ընթերցում»: Սա փաստորեն, բանավոր թարգմանության, տերմինների ստեղծման ու կայունացման, գրական լեզվի մշակման շրջան է եղել, լիովին նախապատրաստելով «ոսկեդարյան հայերենի» երևան գալը:

Դ. Սարգսյանը բնագրագիտական-աղբյուրագիտական աշխատանքի ոչ միայն կազմակերպող, այլև կատարող է: Նա հրատարակության է պատրաստում Խորենացու «Պատմություն» ռուսերեն նոր թարգմանություն, որը կամփոփի Խորենացիագիտության իրական նվաճումները: Այստեղ հիշ չեն և սեփական կռահումները: Խորենացու և Դավիթ Անհաղթի երկերի բնագրական առնչակցությանը վերաբերող մի հոդվածում նա արդեն ապացուցել է, որ Անհաղթը բառական հատվածներ է առնում «Հայոց պատմությունից», հետևաբար Խորենացու ժամանակը հաստատող նոր կռվան է բացահայտվում: Դ. Սարգսյանը թարգմանական կամ իմաստասիրական բազմաթիվ բրնաորների հրատարակության պատասխանատու խմբագիր է, այդ բնագավառում մասնագիտացած երիտասարդներից շատերի գիտական ղեկավարը:

Գիտական ուսումնասիրությունների հետ մեկտեղ Սարգսյանը զբաղվել է գիտակազմակերպչական աշխատանքով: 1971 թ. սկսած նա վարում է ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնը: Արևելագիտության ավանդական ուղղություններին զուգընթաց (իրանագիտություն, թուրքագիտություն, արաբագիտություն) ստեղծվեցին ակադեմիական գիտության նոր օղակներ (հին Արևելք, կովկասագիտություն, արևելյան աղբյուրագիտություն), հիմնվեցին ազգանշանային նոր հրատարակություններ («Հին Արևելք», «Կովկաս և Բյուզանդիա», «Խուրիներ և ուրարտներ»), որոնք հանաչում գտան գիտական շրջաններում:

Գ. Սարգսյանը կոլեկտիվ կամ ընդհանրացնող շատ աշխատությունների ճեղինակակից է, խմբագիր ու կազմակերպող: Նրա գլխավորությամբ ինստիտուտի աշխատակիցներ հաջողությամբ մասնակցել են միութենական և համաշխարհային գիտական կոնֆերանսների, գիտաժողովների ու քննարկումների:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, Արևելագետների համամիութենական ասոցիացիայի հայկական յուժունմունքի նախագահ, «Պատմա-բանասիրական հանդես» խմբագրական կոլեգիայի անդամ, ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր, տաղանդավոր գիտնական Դագիկ Սարգսյանը իր 60-ամյակը բոլորեց գիտական ու գիտակազմակերպչական ծանրակշիռ վաստակներով և նոր ծրագրերով, որոնց իրականացումը հայրենական գիտության նոր նվաճումներ կնշանավորի: Ցանկանում ենք նրան ստեղծագործական նոր հաջողություններ իր գիտական ծրագրերի իրականացման մեջ:

Գ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ,